

---

**ԻՍՊԱՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ  
ԷՌՆԵՍ ՆԵՄԻՆԳՈՒԵՅԻ ԵՐԿԵՐՈՒՄ**

**ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

20-րդ դարի ամերիկյան գրականությունը բնորոշվում է գրական բազմազան ժանրերի ու թեմաների հարստությամբ, զարգացման որոշակի փուլերով և ամենատարբեր հիմնահարցերի՝ գլխապտույտ առաջացնող հոսքով: Այդ գրականության ամենաուշագրավ էջերը թերևս Առաջին աշխարհամարտի պատճառած տառապանքներն ու արհավիրքները հաղթահարած ականատես գրողների ստեղծագործություններն են, որոնց մասին խոսելիս անհնար է զանց առնել «կորուսյալ սերնդի» ամենավաղ ներկայացուցիչներից մեկի՝ **Էռնեստ Միլլեր Նեմինգուեյի** (1899-1961) գրական ինքնօրինակ ժառանգությունը: Նա Վիլյամ Սարոյանի, Սքոթ Ֆիցջերալդի, Նորման Մեյլերի և ուրիշ երևելի գրողների հետ միասին աննախադեպ նպաստ բերեց ամերիկյան արձակյին, բացառիկ ներդրում ունեցավ կարճ պատմվածքի ժանրի զարգացման գործում՝ ստեղծելով սեփական գրելաոճը, որ կրում է «այսբերգի տեսություն» յուրօրինակ անունը:

Էռնեստ Նեմինգուեյն աշխարհին ամենից առաջ հայտնի է «Հրաժեշտ զենքին», «Ո՛ւմ մահն է գուժում զանգը», «Երբ ծագում է արևը», «Ծերունին և ծովը», «Ունենալ և չունենալ» գրական կոթողներով և մի շարք կարճ պատմվածքներով: Նա ծնվել է Չիկագոյի Հյուսիսային Օուք Փարք Ավենյուում, որի բնակիչների մեծ մասը միջին խավի բողոքականներ էին: Նա բազմանդամ ընտանիքի վեցերորդ զավակն էր: Է. Նեմինգուեյը մանկուց տոգորված էր կրոնական ուժեղ զգացումներով, բացառիկ աշխատասիրությամբ և վճռականությամբ. դժվարությունների հաղթահարումը գրողի համար ոչ թե սուկ գաղափարախոսություն էր, այլ համոզմունք ու կենսակերպ: Ահա թե ինչպես է ամերիկացի գրաքննադատ Կառլոս Բաքերը (1909-1987) բնութագրում վիպասանին. «Նա մշտական ուսանող էր, խոր ընթերցող, հրաշալի նատուրալիստ և իրեն շրջապատող կյանքն ուսումնասիրող հետաքրքրասեր դիտորդ»<sup>1</sup>: Է. Նեմինգուեյին հաջողվեց ընթերցողների սիրտն առաջին հերթին գրավել իր անձնական հատկանիշների՝ ազնվության և խիզախության շնորհիվ:

Նորբլյան մրցանակակիր այս երևելի վիպասանի գրական գործու-

---

<sup>1</sup> Baker Carlos, Ernest Hemingway: A Life Story, New York, 1969, p. 77.

նեությունը բնականաբար առաջին անգամ չէ, որ դառնում է գիտական ուսումնասիրման նյութ, սակայն Իսպանիային առնչվող նրա կյանքի էական հատվածը դեռևս կարոտ է անդրադարձի, և ներկա հրապարակումը միտված է որոշ չափով լրացնելու այդ բացը:

Է. Հեմինգուեյի կյանքում Իսպանիան անառարկելիորեն ունեցել է ուրույն, անփոխարինելի ու բեկումնային դեր, և բնավ պատահական չէ, որ նա բազմիցս այցելել է այդ երկիր, իսկ Իսպանիային վերաբերող երկերը դարձել են այն բնութագրող գեղարվեստական յուրօրինակ խճանկարներ: Արձակագրի՝ այս երկրի մասին ստեղծագործություններն ունեն թեմատիկ երկու ուղղվածություն՝ քաղաքացիական պատերազմին և Պիրինեյան թերակղզու մեծագույն խորհրդանիշին՝ ցլամարտին, նվիրված երկեր:

Դեպի Իսպանիա կատարած տասնյոթ ճամփորդությունների ընթացքում ամերիկացի գրողն այս երկիրն ընկալում էր որպես հավերժական դրախտ: Նա հանդիպում էր հիմնականում միևնույն մարդկանց, այցելում նույն վայրերը: Այնտեղ մնում էր ընդամենը երկու-երեք ամիս: Սակայն պատկերը կտրուկ փոխվում է 1937-ին, երբ նա վերստին մեկնում է Իսպանիա, որպեսզի “North American Newspaper Alliance” լրագրի համար ներկայացնի Իսպանիայի քաղաքացիական պատերազմի բուն շարժառիթները: Այս ուղևորությունը վտանգում է նաև նրա անձնական երջանկությունը. վիպասանի կինը՝ Պատուլինը՝ մի երդվյալ կաթոլիկ, համակրանք է սկսում տածել Ֆրանկոյի և նրա՝ ֆաշիզմին հակվելու քաղաքականության նկատմամբ: Մինչդեռ Հեմինգուեյն աջակցում էր հանրապետական կառավարությանը և օգնում նրան ամեն կերպ՝ գնելով շտապօգնության մեքենաներ: Նա եռանդագին մասնակցում է ֆաշիզմի դեմ մղվող պայքարին: Իսպանիայից վերադառնալուց հետո Հեմինգուեյը հանդիպում է հոլանդացի կինոռեժիսոր Յորիս Իվենսին (1898-1989) և մասնակցում նրա ձեռնարկած «Իսպանական հող» խորագրով ֆիլմի նկարահանմանը (1938). նա գրում է ֆիլմի սցենարը: Նույն թվականի հունիսին Հեմինգուեյն անգամ ելույթ է ունենում Ամերիկայի երկրորդ կոնգրեսում՝ ի պաշտպանություն Իսպանիայի Հանրապետության: Իսկ գրական գործունեության առումով ծնվում են վիպասանի «Հինգերորդ շարասյուն» գրական սցենարը (1938), մի քանի կարճ պատմվածքներ՝ «Մադրիդի վարորդները», «Ծերունին կամրջի վրա», «Թիթեռն ու տանկը», և «Ում մահն է գուժում զանգը» (1940) վեպը:

Է. Հեմինգուեյը «Մադրիդի վարորդները» (1937) կարճ պատմվածքում անդրադառնում է պատերազմի թողած հետևանքներին հասարակ ժողովրդի վրա: Հեղինակը հերոսների կերպարները բացահայտելու համար դիմում է գրական բավական ուշագրավ մեթոդի. նա երկխոսությունների, հերոսների փոխհարաբերությունների, վերհուշերի և խորհրդանիշների միջոցով բացահայտում է այդ մարդկանց զգացմունքներն ու դիրքորոշումները՝ փորձելով ընթերցողին ներկայացնել

իսպանացու բուն էությունը: Այս պատմվածքը տարբեր երկրներից չորս վարորդների մասին է, որոնք ուղարկվել էին օգնելու Մադրիդում գտնվող լրագրողին՝ նյութեր հավաքելու թե՛ քաղաքի և թե՛ ռազմաճակատի մասին:

Նրանցից առաջինը Թոմասն է, որն ինքն իրեն հայտարարում է «ազնիվ մղումներ»<sup>2</sup> ունեցող մարդ: Մակայն նա անճարակ է, ունի դրական, բայց ոչ այնքան շահեկան մղումներ, այդ իսկ պատճառով նրան հետ են ուղարկում Վալենսիա, որտեղ էլ բանտարկվում է, իսկ վերջինիս փոխարինում է խիզախ ու անարխիստ Դեյվիդը: Նրան հիացմունք էին պատճառում ռազմականության ձայները, խոսում էր գոեհիկ լեզվով, իսկ մեքենա շատ վատ էր վարում: Ի դեպ, բանտում է հայտնվում նաև մեկ այլ վարորդ՝ Սիդը: Նա գողանում է մեքենան՝ մոտալուտ հարձակումից առաջ լրագրողին թողնելով առանց փոխադրամիջոցի: Պատմվածքի առանցքային կերպարը, սակայն, Հիպոլիտոն է՝ «գրանիտից կերտված» մարտնչող, համառ իսպանացին: Նա ոչ միայն չի բաժանվում հրազենից, լիովին տիրապետում է զենքին, այլև ունակ է դատողություններ անելու երկրում տիրող քաղաքական իրավիճակի մասին: Իսկ երբ Մադրիդից հեռանալու ժամանակ հեղինակը փորձում է վարձահատույց լինել նրան՝ առաջարկելով որոշակի գումար, անմիջապես հետևում է մերժումը, որն ուղեկցվում է յուրօրինակ պատճառաբանությամբ. «-Ո՛չ,- ասաց նա,- լսի՛ր, մենք լավ ժամանակ անցկացրինք, այնպես չէ՞»<sup>3</sup>: Այսինքն՝ ըստ նրա՝ որևէ մեկի հետ անցկացրած մի քանի հաճելի ժամերն ավելին արժեն, քան նյութական որևէ հատուցում:

«Հինգերորդ շարասյուն» պատմվածքի (այն, ի դեպ, ընդգրկված է Հեմինգուեյի «Առաջին քառասունինը պատմվածքները» ժողովածուում) գլխավոր հերոսը՝ Ֆիլիպ Ռոուլինգը, ծնունդով ամերիկացի էր և Իսպանիայի երկրորդ Հանրապետության համար աշխատում էր որպես գաղտնի գործակալ: Նա այնքան է տարվում հինգերորդ շարասյան իր աշխատանքով, այսինքն՝ ֆաշիստների համակիրների հայտնաբերմանը և ձերբակալմանը նպաստելով, որ հրաժարվում է անգամ սիրած աղջկանից՝ Դորոթիից: Է. Հեմինգուեյը երագում էր բեմականացած տեսնել իր այս երկը, սակայն որոշ հանգամանքներ անընդհատ խոչընդոտում էին այդ երագանքի իրականացումը. այն բեմականացվեց միայն բրողվելյան տարբերակով, բայց հետագայում դարձավ «Հրաժեշտ զենքին» ֆիլմի հենքը:

Ուշագրավ է, որ «Ծերունին կամրջի վրա» երկէջանոց պատմվածքը սկզբում պետք է լույս ընծայվեր իբրև հողված, սակայն լրագրող Հեմինգուեյը մտափոխվում է և այն որպես պատմվածք նույն ծավալով էլ

<sup>2</sup> Hemingway E., Spanish fatalism typified by driver // <http://movies2.nytimes.com/books/99/07/04/specials/hemingway-fatalism.html>

<sup>3</sup> Նույն տեղում:

տպագրում է “Ken Magazine” ամսագրում: Այստեղ ներկայացված են կյանքի երկու հակադիր կողմերը՝ պատերազմն ու խաղաղությունը, այսինքն՝ չարն ու բարին, որոնց հակասությունն ստեղծում է աշխարհը: Պատմվածքի առանցքը 1938 թվականի ապրիլին՝ իսպանական պատերազմի ժամանակ՝ Ջատիկի օրը, հարկադրված կանգառի մասին միջադեպն է, երբ հեղինակը պատահաբար հանդիպում է էբրո գետի կամրջի վրա նստած հոգնաբեկ մի ծերունու: Կարճատև գրույցից պարզ է դառնում, որ ծերունին ապրում էր միայնակ, աղքատ, տխուր, բայց ինչ-որ առումով երջանիկ կյանքով, քանի որ հոգ էր տարել իր սիրելի կենդանիներին, իսկ այժմ անտեր էր թողել նրանց՝ ստիպված լքելով հայրենի քաղաքը: Կենդանիների անորոշ ճակատագիրը խորապես անհանգստացնում էր նրան ու տանջում հոգին: Նա անգամ անհաղորդ է այն պարզ վտանգին, որ դամոկլյան սրի նման կախված է իր գլխին. թշնամու մոտալուտ հարձակումն այնքան էլ հեռու չէր: Այս փոքրիկ դրվագով տաղանդավոր վիպասանը բացում է ողբերգական մի ամբողջ աշխարհ. ծերունին ուժասպառ է, անկարող շարունակելու իր ուղին՝ նոր, ապահով կյանք գտնելու համար, և ճակատագրի հեզնանքով այդ պահին կենդանիները նրանից ավելի բախտավոր են, քանի որ փրկվելու հնարավորություն ունեն: Մինչդեռ ծերունին իր տարիքի կապանքների մեջ է:

Ուշագրավ է նաև պատմվածքի վերջում հեղինակի բառախաղը: Իր պահած աղավնիների մասին խոսելիս ծերունին օգտագործում է “pigeon” բառը, որը նշանակում է ընտանի աղավնի: Իսկ հեղինակը, երբ հարցնում է՝ արդյոք ծերունին աղավնիների վանդակի դռնակը բաց է թողել, նրանց միտումնավոր անվանում է “dove”՝ վայրի աղավնի: Ծերունուն հավաստիացնում է, որ աղավնիները կթռչեն և կփրկվեն: Վիպասանը գուցե ցանկանում է ընդգծել, որ աղավնին՝ որպես խաղաղության խորհրդանիշ, կթևածի աշխարհի վրա:

«Թիթեռն ու տանկը» պատմվածքում ևս հեղինակն անդրադառնում է իսպանական պատերազմի թեմային, մասնավորապես Մադրիդի շրջափակմանը: Այն առաջին անգամ տպագրվել է 1938-ին «Esquire» ամսագրում: Ինչպես վկայում է վիպասանի կենսագիր Կառլոս Բեյքերը, Ջոն Սթայնբեքն այն անվանել է «բոլոր ժամանակների սակավաթիվ հաջողված պատմվածքներից մեկը»<sup>4</sup>: Այն մի իրական միջադեպ է, որը տեղի է ունեցել շրջափակված Մադրիդի սրճարաններից մեկում. թյուրիմացությունը հանգեցնում է ողբերգության՝ անիմաստ սպանության: Սպանվողի միակ մեղքը լարված իրավիճակում թեթևամիտ կատակն է: Նա ներս է խուժում սրճարան և սկսում ջրցան խաղալիք հրացանով «կրակել» մատուցողի վրա: Վերջինս զայրանում է, սակայն դա չի կանգնեցնում զավեշտախաղը նախաձեռնողին: Շուտով այս ան-

<sup>4</sup> Baker Carlos, Ernest Hemingway: A Life Story, p. 337.

մեղ կատակը դառնում է ճակատագրական, երբ մատուցողին միանում են երեք հրացանավորներ. նրանք սկզբում ծեծում են այդ քաղաքացուն, ապա սրճարանի մյուս այցելուների աչքերի առաջ գնդակահարում նրան: Ուշարժան է, որ երբ ոստիկանությունում հարցաքննությունից հետո պարզվում է, որ ջրցան հրացանը լիցքավորված է եղել ոչ թե սովորական ջրով, այլ օծանելիքով, սրճարանատերը հայտարարում է. «Նրա գվարթությունը բախվեց պատերազմի լրջությանը, ինչպես թիթեռն ու տանկը»<sup>5</sup>: Այսպես էլ ծնվում է այս պատմության խորագիրը: Առաջին հայացքից այն թվում է ոչ այնքան խորը, սակայն ուշադիր վերլուծելիս ընթերցողի առջև բացվում է իմաստասիրական խորքը. պատերազմի թեժ պահին մարդկանց ուրախություն պարզևողը թիթեռնիկն է, որը չի կարող երկար ապրել, իսկ տանկերը, որոնք միայն մահ են սփռում, միշտ չէ, որ հեշտությամբ են պարտվում:

Է. Հեմինգուեյի՝ պատերազմի թեմային նվիրված երկերը վերլուծելիս անհնար է զանց առնել հեղինակի լավագույն գործերից մեկը՝ «Ո՛ւմ մահն է գուժում զանգը» վեպը: Այն պատմում է երիտասարդ ամերիկացու՝ Ռոբերտ Ջորդանի մասին, որն այդ պատերազմի ժամանակ կցված էր հանրապետականների պարտիզանական ջոկատին և ուներ կամուրջ պայթեցնելու հանձնարարություն: Վիպական հյուսվածքում ընթերցողն ականատես է լինում Ջորդանի՝ իսպանացիներին միանալու փորձերին, որոնք, սակայն, ձախողվում են. նա վերջիններիս համար շարունակում է մնալ ոչ թե ամերիկացի, այլ անգլիացի: Այսինքն՝ իսպանացիները նույնիսկ չեն փորձում ճշտել կամ ընդունել նրա ազգությունը: Գրքում պատկերված կերպարներն իրական են: Բուն իրադարձությունները, որոնք տևում են չորս օր և երեք գիշեր, հիմնված են պատերազմին քաջատեղյակ վիպասանի անձնական փորձառությունների վրա: Նկատելի է, որ հեղինակային նարատիվն առաջ է մղում գեղարվեստական ազդեցիկ պատկերներին՝ իրականի ու երևակայականի ինքնատիպ ներհյուսումներով:

Է. Հեմինգուեյն այս վեպը գրել և առաջին անգամ հրատարակել է 1940 թվականին՝ Կուբայում ապրած տարիներին, և այն նվիրված է ամերիկուհի վիպասան, 20-րդ դարի ռազմական իրադարձությունները լուսաբանող լավագույն լրագրողուհիներից մեկին՝ Մարթա Գելհորնին (1908-1998): Երկի խորագիրը հեղինակը վերցրել է անգլիացի բանաստեղծ և հոգևորական Ջոն Դոնի (1572-1631) աղոթքներից, իսկ որպես բնաբան ներկայացրել է վերջինիս մտորումներից մի հատված. «Ոչ մի մարդ մեկուսացած, ինքն իր համար ապրող կղզի չէ: Յուրաքանչյուր մարդ մի կտորն է Մայրցամաքի, մի մասն ամբողջ ցամաքի: Եթե ծովը քշի տանի մերձափնյա ժայռը, Եվրոպան կփոքրանա, ինչպես կփոքրա-

<sup>5</sup> <https://theteacherscrate.files.wordpress.com/2014/03/the-complete-short-stories-of-ernest-hemingway-ernest-hemingway.pdf>

նար, եթե տաներ մի Հրվանդան, տաներ քո ընկերների կամ քո սեփական կալվածքը: Յուրաքանչյուր մարդու մահը փոքրացնում է ինձ, որովհետև իմ մեջ ամբողջ մարդկությունն է: Եվ դրա համար էլ երբեք մի՛ հարցրու, թե ում մահն է գուժում զանգը: Քո՛ մահն է գուժում»<sup>6</sup>: Ասել է թե՛ ընտրելով նման խորագիր և բնաբան՝ վիպասանն ընդգծում է այն գաղափարը, որ Իսպանիայում մոլեգնող պատերազմը սոսկ իսպանացիների խնդիրը չէ, այլ համայն մարդկության: Այս տեսակետից վեպի առաջին էջերում գետեղված՝ «Իսպանիայում զոհված ամերիկացիների մասին» վերնագրով հատվածը կարելի է ինչ-որ առումով համարել ամերիկացի գրողի հավատո հանգանակը. «Ֆաշիստները կարող են քայլել երկրի ճամփաներով՝ շաչեցնելով ուրիշ երկրներից բերված ծանր մետաղը: Դավաճանների ու վախկոտների օժանդակությամբ նրանք կարող են առաջ շարժվել: Նրանք կարող են քաղաքներ ու գյուղեր քանդել, նրանք կարող են փորձել ժողովրդին ստրկության մեջ պահել: Բայց ստրկության մեջ չես կարող պահել ոչ մի ժողովրդի:

Իսպանական ժողովուրդը նորից ոտքի կկանգնի, ինչպես որ կանգնել է սրանից առաջ բռնապետությունների դեմ:

Մեռելները կարիք չունեն կանգնելու: Նրանք հիմա մասնիկներն են հողի, իսկ հողը երբեք չի նվաճվի: Որովհետև հողը հավերժական է: Նա կգերապրի բոլոր բռնապետությունները»<sup>7</sup>:

Գլխավոր հերոսն ապրել է Իսպանիայում նախքան պատերազմը, իսկ պատերազմի ժամանակ ռուս զեներալից կամուրջը պայթեցնելու հրաման ստացել. այդ գործում նրան պետք է օգնեին իսպանացի պարտիզանները: Եվ ահա պարտիզանական ճամբարում նա հանդիպում է ապստամբ Անսելմոյին և ֆաշիստների վայրագություններից խորապես տուժած Մարիային: Այս աղջկա հանդեպ սերը երիտասարդի հոգում առաջացնում է ներքին տառապանքների ալիք. նրա ներսում ծայր է առնում մի յուրօրինակ պայքար իր սեփական պատասխանատվությունը գիտակցելու և սիրո շնորհիվ կյանքի հանդեպ ձեռք բերած նոր հետաքրքրության միջև: Պատասխանատվության խոր զգացումը սեպ է խրում նաև Ջորդանի և պարտիզանական ջոկատի առաջնորդ Պաբլոյի միջև. վերջինս համաձայն չէր կամուրջը պայթեցնելու գաղափարին, քանի որ կարծում էր՝ դա կվտանգեր նաև ջոկատի մյուս անդամների կյանքը: Այս բախման հանգուցալուծումը, սակայն, ողբերգական էր. Պաբլոն վերցնում է պայթուցիկներն ու պայթուցիչ սարքը և փախչում ջոկատից, իսկ Ջորդանը թշնամուն կասեցնելու հրամանն ի կատար ածելու համար օգտագործում է նոնակ, որի պայթյունից զոհվում է նրա ընկերը՝ Անսելմոն, ինքն էլ մահացու վիրավորվում է: Ուշագրավ է, որ Ջորդանը մերժում է ընկերոջ՝ Ավգուստինի առաջարկը, որը պատ-

<sup>6</sup> Է. Հեմինգուեյ, Ո՞ւմ մահն է գուժում զանգը, թարգմ. անգլերենից՝ Համբարձում Քենդերյանի, Եր., 1985, էջ 217:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 220:

րաստ էր կրակել և սպանել իրեն՝ վերջ դնելու հոգեվարքի տառապանքներին: Վեպի ավարտին գետնին ընկած կարեվեր Ջորդանը փորձում է դարանակալել և սպանել մի քանի թշնամիների՝ ապահովելու համար իր սիրած աղջկա և մյուս պարտիզանների անարգել հեռանալն այդ վայրից: Այսպիսով՝ ամերիկացի վեհանձն երիտասարդը կյանքի վերջին պահերն ապրում է՝ կուրծքը հպած Իսպանիայի հողին. չէ՞ որ պատերազմի դեմ պայքարը համամարդկային խնդիր է. այն չի ճանաչում ոչ ազգություն, ոչ տարածություն և ոչ էլ մարդկային էթանագին ապրումներ...

Է. Հեմինգուեյի՝ Իսպանիայի պատերազմին վերաբերող երկերը հիմնված են իրական փաստերի վրա, պատկերում են հեղինակի անձնական փորձառությունը և կրում են յուրօրինակ ուղերձ, որ հղվում է համայն մարդկությանը. պատերազմը, ինչպիսին էլ որ լինի, դատապարտելի է, քանի որ խեղում և կործանում է մարդկային ճակատագրերը:

Հեմինգուեյի հետաքրքրությունը Իսպանիայի նկատմամբ չի սահմանափակվում սուկ 1930-ականներին այնտեղ մոլեգնող քաղաքացիական պատերազմին նվիրված երկերով: Նա ընթերցողին է ներկայացնում նաև գրական այնպիսի ստեղծագործություններ, որոնց առանցքը Իսպանիայի խորհրդանիշն է՝ ցլամարտը: Նկատելի է, որ հեղինակն ինքն էլ մեծ հետաքրքրություն է դրսևորել այդ հանդիսախաղի հանդեպ:

Համապատասխան աղբյուրների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հեղինակի առաջին ծանոթությունը ցլամարտին կայացել է 1923-ին՝ կնոջ՝ Հեդլի Ռիչարդսոնի հետ Իսպանիա կատարած ճամփորդության ժամանակ: Պամպլոնա քաղաքում կազմակերպված ավանդական փառատոնի ժամանակ նա ականատես է լինում այդ գեղեցիկ, սակայն դաժան ավանդույթին: Գրողը սկզբում որոշում է ցլամարտից ստացած տպավորությունները ընթերցողին փոխանցել պատմվածքով, սակայն շուտով գիտակցում է, որ վերջինիս ժանրային հնարավորություններն ի գործ չեն լիովին մարմնավորելու իր մտահոգումները, և ընտրում է արձակի լայնակտավ ժանրը. ծնվում է «Եվ ծագում է արևը» խորագրով հանրահայտ վեպը, որն առաջին անգամ լույս է տեսնում 1926 թվականին, բայց մեկ տարի անց անգլիացի հրատարակիչ Ջոնաթան Քեյփը Լոնդոնում այն տպագրում է «Ֆիեստա» վերնագրով: Հայտնի է նաև այն, որ հեղինակն ինքը նախնական տարբերակը սկզբում վերնագրել է «Կորուսյալ սերունդ»: Վեպում արծարծված թե՛ կերպարները և թե՛ իրադարձություններն իրական են: Վեպը բազմիցս վերահրատարակվել և թարգմանվել է աշխարհի տարբեր լեզուներով:

Նշելի է, որ «Եվ ծագում է արևը» վեպի խորագիրը համատասխանում է Աստվածաշնչի «Ժողովող» գրքից վերցված գաղափարին, որում մասնավորապես ասվում է. «Ունայնություն ունայնությանց... ամեն ինչ

ունայն է»<sup>8</sup>: Վեպում այս անծայր իմաստությունը մեկնաբանվում է որպես բնաբան ծառայող հետևյալ խոսքերով. «Անցնում է մի սերունդ, գալիս է ուրիշ սերունդ, իսկ երկիրը հավերժ է... Ծագում է արևը, մայր է մտնում արևը ու շտապում այնտեղ, որտեղից ծագում է... Փչում է քամին հարավ, փչում է հյուսիս, պտտվում, պտույտ տալիս ու դառնում ի շրջանս յուր... Դեպի ծով են հոսում բոլոր գետերը, իսկ ծովը դուրս չի գալիս իր ավերից, քանզի վերադառնում են գետերն այնտեղ, որտեղից սկիզբ են առնում ու նորից հոսում»<sup>9</sup>: Հենց սկզբից վիպասանն ընթերցողին նախապատրաստում է յուրօրինակ պատումին. կյանքը պարահանդես չէ հատկապես պատերազմի արհավիրքները ճաշակած մարդկանց համար, որի գոհերից է գլխավոր հերոսը՝ ամերիկացի լրագրող Ջեյք Բարնսը: Մակայն, ինչպես ամեն գիշերից հետո բացվում է պայծառ առավոտը, այնպես էլ պատերազմին հաջորդում է խաղաղությունը: Ու թեև ռազմադաշտից վերադարձածները «կորուսյալ սերունդ» են, բայց ողջ են և կարող են շարունակել ապրել: Մակայն այդ «երջանկությունն» այնքան էլ կատարյալ չէ, քանի որ պատերազմից մագապուրծ երիտասարդները սոսկ գոյատևում են. Ջեյք Բարնսը չի գոհվել, բայց կորցրել է սիրած աղջկա՝ Բրեյթի հետ ապրելու հնարավորությունը. վիրավորվել է մարտադաշտում և աղջկան կարող է առաջարկել միայն հոգևոր կապ: Թվում է՝ սա պետք է հուսալքեր նրան, բայց վեպի ավարտին, երբ աղջիկն ասում է. «-Այո, Ջեյք, ինչքան լավ կլիներ մեզ համար կյանքն իրար հետ», հետևում է տղայի երկիմաստ պատասխանը. «-Այո,- ասացի ես: - Այդ միտքն էլ արդեն համարենք, որ քիչ չէ, այո՞»<sup>10</sup>: Այն, որ մի ամբողջ սերունդ այլևս «կորուսյալ» է, հեղինակը հավաստում է՝ իբրև բնաբան օգտագործելով նաև Հերթրուդ Սթայնի հետևյալ խոսքերը. «Բոլորդ, բոլորդ կորած սերունդ եք»<sup>11</sup>:

Արձակագրին հաջողվել է այս ստեղծագործության էջերում միահյուսել կորուսյալ սերնդի անպաշտպանվածության և լքվածության, տղամարդկային անինքնավստահության, կեղծ ընկերության ու հակասեմականության հավերժական թեմաները, որոնք, սակայն, պարբերաբար աղերսվում են ցլամարտի՝ իբրև «գեղեցիկ ողբերգության» թեմային: Վիպասանի համար ցլամարտն իդեալականացված բեմականացում է, որտեղ ցլամարտիկը վեհորեն ընդունում է մարտահրավերը, պարտվում կամ հաղթում՝ բայց երկու դեպքում էլ այդ ամենն անելով որոշակի նրբագեղությամբ:

Անշուշտ, վերը նշվածի առումով հարկ է առանձնացնել Պեդրո Ռոմերոյի կերպարը, որը կատարելության մարմնացում է և վայելում է

<sup>8</sup> **Աստվածաշունչ**, Ժողովող 1:1:

<sup>9</sup> **Է. Հեմինգուեյ**, Եվ ծագում է արևը (Ֆիեստա), թարգմ. անգլերենից՝ Ռուզան Ղազարյանի, Եր., 1985, էջ 3:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 216:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 3:



հեղինակի յուրահատուկ համակրանքը: Հեմինգուեյն իր հերոսին անվանել էր հավանաբար ի պատիվ իսպանացի ցլամարտիկ Պեդրո Ռոմերո Մարտինեսի (1754-1839), որը հայտնի էր հազարավոր ցլերի ամենադժվար ձևերով սպանելու արվեստով: Այդ մասին է վկայում վեպում տեղ գտած հետևյալ նկարագրությունը. «Ռոմերոն հին դպրոցի վարպետությունն էր ցույց տալիս, պահպանելով շարժման գծերի անթերի մաքրություն՝ իրեն առավելագույն վտանգի ենթարկելով, հստորեն նախապատրաստելով ցլին վերջին հարվածին, նրան ենթարկելով իր կամքին և հարվածից առաջ արդեն նրան բերելով այն գիտակցության, որ ինքը նրա համար անհասանելի է»<sup>12</sup>: Վիպասանի համակրանքը ցլամարտիկի նկատմամբ երևում է նրան մարտադաշտում նկարագրելիս. «Ռոմերոն երբեք չէր ծռմովում, ավելորդ շարժումներ չէր անում, աշխատում էր ձիգ, բնական և անկաշկանդ»<sup>13</sup>: Հեղինակի վերաբերմունքն առկա է նաև տասնիննամյա այս պատանու արտաքինը նկարագրելիս. «Ռոմերոյի դեմքը շատ թուխ էր: Նա շատ գեղեցիկ պահվածք ուներ»<sup>14</sup>:

Ինչպես պարզ տեսնում ենք, «Եվ ծագում է արևը» վեպն առինքնող է իր յուրահատուկ համաձուլումներով, ուստի պատահական չէ, որ ամերիկացի Ջեյմս Նեյգելը գրում է. ««Եվ ծագում է արևը» գրական դրամատիկ իրադարձություն է, և դրա ազդեցությունը չի անցել տարիների ընթացքում»<sup>15</sup>:

Ցլամարտի թեմային է նվիրված նաև Է. Հեմինգուեյի «Մահը կեսօրին» վավերագրական գիրքը, որը հրատարակվել է 1932 թվականին: Այստեղ վիպասանը պատմում է 1920-30-ականներին ցլամարտի հանդեպ իր հույզերի մասին: Դեռևս 1923-ին, երբ նա առաջին անգամ այցելում է Բսպանիա, խորապես հիանում է այս հանդիսախաղով: Հետագա այցելությունների ժամանակ էլ սովորություն է դարձնում ցլամարտիկների հետ մնալ միևնույն հյուրանոցներում և անգամ սնվել նույն վայրերում: Վավերագրական այս երկի լույսընծայմամբ Հեմինգուեյը ամերիկացի հասարակությանը ծանոթացնում է ցլամարտի թե՛ հուզական և թե՛ իրական կողմերին: Ահա թե ինչպես է վիպասանն արձանագրում այդ փաստը. «Ես փորձում էի գրել, և դա դժվար էր... ես պետք է գրի առնեի այն, ինչն իրականում գործողությամբ էր տեղի ունենում, այն իրական երևույթները, որոնք քո մեջ զգացումներ էին հարուցում»<sup>16</sup>: «Մահը կեսօրին» վեպը սոսկ ցլամարտի մասին չէ, այն նաև ինքնակենսագրական է, քանի որ պարունակում է կյանքի վերաբերյալ վիպասանի դիրքորոշումները և կենսափորձը:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 146-147:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 146:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 153:

<sup>15</sup> **James Nagel**, "Critical essays on Ernest Hemingway's *The Sun Also Rises*", Ney York, G.K. Hall, 1996, p. 87.

<sup>16</sup> **Hemingway E.**, *Death in the Afternoon*, Simon and Schuster, London, 2003, p. 10.

Ստվարածավալ այս վեպի պատումի ընթացքում հեղինակն ընթերցողին խոստովանում է, որ առաջին անգամ մեկնել է Իսպանիա ամերիկացի վիպասանուհի, արվեստի հմուտ գիտակ Հերթրոդ Սթայնի ազդեցության ներքո՝ մոտիկից ծանոթանալու ցլամարտին՝ իբրև ազգային ինքնատիպ հանդիսության: Գրողն ավելի հեռուն է գնում և ընդգծում, որ այդ քայլին դիմում է ներքին վախով, բայց գրելու համար նյութին ծանոթանալու հրամայական անհրաժեշտությունից ելնելով: Ապա անդրադառնում է ցլամարտի բարոյական կողմին, գեղագիտական արժեքին և կատարում յուրօրինակ համեմատություններ մարդկանց և կենդանիների միջև: «Ինչ վերաբերում է բարոյականությանը, գրում է հեղինակը, - ապա ես գիտեմ, որ բարոյականն այն է, որից հետո դու քեզ լավ ես զգում, իսկ անբարոյականն այն է, որից հետո դու քեզ վատ ես զգում: Եվ ելնելով բարոյականության այս չափանիշներից, որոնք ես չեմ պաշտպանում, ցլամարտը շատ բարոյական է ինձ համար, որովհետև այդ ընթացքում ես ինձ շատ լավ եմ զգում և ունենում եմ կյանքի ու մահվան, բարոյականի և անբարոյականի զգացումներ, իսկ երբ այն ավարտվում է, ես ինձ զգում եմ շատ վատ, բայց և շատ լավ»<sup>17</sup>:

Թեպետ վեպի հիմնական թեման ցլամարտն է՝ իր դաժան, սակայն, գրավիչ դասական գեղեցկությամբ, վիպասանը, այնուամենայնիվ, շարունակում է կատարել շեղումներ և, ինչպես նախկինում, ընթերցողներին տալիս է որոշակի խրատներ:

Այսպիսով՝ «Մահը կեսօրին» վավերագրական վեպով Հեմինգուեյը ներկայացնում է ցլամարտն իբրև արվեստ, կյանքի հարուցած դժվարությունների դեմ պայքար, որտեղ կա նաև անխուսափելի պարտություն:

Ամփոփելով Էռնեստ Հեմինգուեյի կյանքում Իսպանիայի դերը, ինչպես նաև այդ հիասքանչ երկրին նվիրված նրա գրական երկերի վերլուծությունը՝ նշենք մի բավական ուշագրավ փաստ. 1968 թ. Փամփլոնա քաղաքում, որտեղ տեղի ունեցած իրադարձություններին, ինչպես արդեն նշեցինք, նվիրված է վիպասանի «Եվ ծագում է արևը (Ֆիեստա)» վեպը, բացվել է ամերիկացի գրողի կիսանդրին: Թեպետ ժամանակի ընթացքում կիսանդրու պատվանդանին դրված նամակներից շատերն անխուսափելիորեն խունացել են, սակայն իսպաներենով գրված մի նամակում հստակ կարդում ենք. «Էռնեստ Հեմինգուեյ, Նոբելյան մրցանակի դափնեկիր, այս քաղաքի բարեկամն ու նա, ով հիացավ վերջինիս ֆիեստայով, պատկերեց ու տարածեց այն»<sup>18</sup>: Այստեղ ակնհայտ է գրողի անգնահատելի վաստակը, որի շնորհիվ ընթերցողը հստակ տեսնում է Իսպանիան, մտերմանում իսպանացի ժողովրդի հետ՝ անգամ երբևէ չայցելելով հակասություններով, բայց և հրաշքերով լի երկիրը:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 2:

<sup>18</sup> **Markham J. M.**, Hemingway's Spain, "The New York Times" // <https://www.nytimes.com/1985/11/24/travel/hemingway-s-spain.html>

**Բանալի բառեր** – *Էրնեստ Հեմինգուեյ, իսպանական միջավայր, ինքնակենսագրական հիւք, «Մադրիդի վարորդները», «Օերունին կամրջի վրա», «Թիթեոն ու տանկը», «Ում մահն է գուժում զանգը», «Եվ ծագում է արևը»*

**РУЗАН КАЗАРЯН – Отражение испанской действительности в прозе Эрнеста Хемингуэя.** – Статья посвящена отражению испанской действительности в произведениях выдающегося американского прозаика Эрнеста Хемингуэя. В частности, отмечено, что Испания сыграла важную роль в жизни писателя, поэтому испанская тема заняла обширное место в его романах и рассказах. Подчёркнуто, что в прозе Хемингуэя фигурируют вымышленные персонажи и ситуации, причём именно сочетание реальности и вымысла во многом обусловило её воздействие на читателя и снискало автору мировую славу.

**Ключевые слова:** *Эрнест Хемингуэй, испанская среда, автобиографическая основа, «Мадридские шофёры», «Старик у моста», «Мотылёк и танк», «По ком звонит колокол», «И восходит солнце»*

**RUZAN GHAZARYAN – The Reflections of Spanish Environment in Ernest Hemingway's Works.** – The article is devoted to the reflection of the Spanish environment in the works of famous American prose writer Ernest Hemingway. In particular, it has been noted that in the writer's life Spain had a crucial role, and his works relating to it refer to both the civil war and the greatest symbol of the Pyrenean Peninsula. It is underlined that the author created a number of fictional characters and images that have brought him worldwide fame with a unique combination of real and fiction.

**Key words:** *Ernest Hemingway, Spanish environment, autobiography, "The chauffers of Madrid", "The Old Man at the Bridge", "The Butterfly and the Tank", "For Whom the Bell Tolls", "The Sun Also Rises"*

Ներկայացվել է՝ 30.05.2019

Գրախոսվել է՝ 18.06.2019

Ընդունվել է տպագրության՝ 28.06.2019